ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 22-Ա

ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով համանքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Լուսառատ համայնքի ավագանու թիվ 7 նիստի հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ

1. ԼՈՒՍԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ 2018 թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ. Ա. ԵՄԻՇՅԱՆ/

2. ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿ. Ա. ՔԵՇԻՇՅԱՆ/

3. ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐՁԸ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ -ԻՆ :

/ԶԵԿ. Դ. ՀԱԿՈԲՅԱՆ/

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 23-Ն

ԼՈՒՍԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ 2018 Թ. ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի 2018 թ. բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.
- ֆոնդային բյուջեի պահուստային ֆոնդի 900422104167 հաշվի 11-01-02-51 գործառնական և դասակարգման 4891 հոդվածից պակասեցնել 300,0 հազ. դրամ, այն հատկացնել կառավարման մարմնի պահպանում 900422104068 հաշվի 01-01-01-51 գործառնական ր դասակարգման 4239 հոդվածին:

Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը սահմանել 3158,7 հազ. դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 24-Ա

ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՀՈՂԻ ՀԱՐԿԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

1. Գևորգ Սահակի Առաքելյանին՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող 1,85 հա վարելահողի վրա պտղատու այգի հիմնելու կապակցությամբ, աղատել հողի հարկից.

հ/հ	ծածկագիրը	տարածքը /հա /	տեսակը	հողի հարկից ազատման ժամկետը
1	0112-0003	0,7	ծիրան	5 տարի 2019-2023 թթ.
2	0112-0003	0, 15	խնձոր	6 տարի 2019-2024 թթ.
3	0113-0002	1,0	խնձոր	6 տարի 2019-2024 թթ.

	ընդամենը	1,85		

Կողմ -5 Դեմ -0 Զեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ

3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 25-Ա

ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒՂԵՐԾԸ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ -ԻՆ

Վեհափառ Տեր

Հայ ժողովրդի պատմության ցանկացած հատված դժվար է պատկերացնել առանց Հայ Առաքելական եկեղեցու և նրա դերակատարման: Դարեր շարունակ եկեղեցին քրիստոնեության ուսմունքը քարոզելուց և պահպանելուց զատ իր վրա է վերցրել նաև ազգային տարաբնույթ հարցերի և խնդիրների լուծումը, ինչպես նաև ազգապահպան նվիրական գործը:

Դատելով վերջին ժամանակներում Ձեր շուրջ կատարվածից, որը անկեղծ ասած շատ խորը ցավով ենք ընդունում, եթե ոչ հիմնական, ապա զգալիորեն պայմանավորված է շատ ու շատ բարձրաստիճան եկեղեցականների պահվածքով և վարքագծով, որոնք հոգևորական դառնալու իրավունքը ոչ թե վաստակել, այլ ձեռք են բերել: Ահա այդպիսի հոգևորականներից է Խոր Վիրապ եկեղեցու հոգևոր առաջնորդը:

Արարատի մարզի Լուսառատ համայնքի վարչական տարածքում գտնվող Խոր Վիրապ Վանական համալիրին տրամադրվել է 2,96 հա պետական սեփականություն հանդիսացող պատմամշակութային նշանակության հողամաս, որի նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվել է իրավունքների պետական գրանցում:

ՀՀ Կառավարության 24.12.2003թ. N 1709-Ն որոշմամբ Լուսառատ համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողամասերը անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել են համայնքին: Ըստ վերոնշյալ

որոշման 5-րդ հավելվածի 65,84 հա պատմամշակութային նշանակության հողերը համայնքին չեն փոխանցվել և թողնվել են որպես պետական սեփականություն, որտեղ եկեղեցուն տրամադրված հողամասի մակերեսը նշված է 0,37հա: Հարկ է նշել նաև, որ մինչև 2000թ. համայնքի հողաշինարարական փաստաթղթերում Խոր Վիրապ վանքի զբաղեցրած և սպասարկման համար հողամասը նույնպես կազմել է 0,37 հա: ՀՀ Կառավարության 17.07.2000թ. 403 որոշմամբ Խոր Վիրապ վանքը անհատույց սեփականության իրավունքով հանձնվել է Հայաստանյաց Առաքելական եկեղեցուն: Ըստ վերոնշյալ որոշման հողատարածքի հանձման և ընդունման աշխատանքները պետք է կատարեր Հայաստանի Հանրապետության պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչությունը:

Նույն որոշմամբ հանձնարարվել է նաև Արարատի մարզպետարանին՝ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության հետ համատեղ ապահովել եկեղեցուն անհրաժեշտ հողատարածքների ճշտման և մշտական օգտագործման իրավունքով տրամադրման աշխատանքները:

Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության և մարզպետարանի կողմից ճշտվել են Խոր Վիրապ վանական համալիրին տրամադրվող հողամասի սահմանները և հողամասի տրամադրման խնդիրը լուծելու նպատակով համապատասխան առաջարկություն է ներկայացվել Լուսառատի համայնքապետարան: Լուսառատ համայնքի ավագանու 19 փետրվար 2001թ. թիվ 8/2 նիստում քննարկվել է հուշարձանների պահպանության վարչության կողմից ներկայացված առաջարկությունը և համաձայն ներկայացված հողամասի հատակագծի Խոր Վիրապ Վանական համալիրին տրամադրվել է 2,96հա պետական սեփականություն,

հանդիսացող պատմամշակութային նշանակության հողամաս, որի նկատմամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում: Համայնքի ավագանին 2,96 հա հողամասի տրամադրման վերաբերյալ որոշումը կայացրել է կարևորելով եկեղեցու դերն ու նշանակությունը, արժեքներ՝ որոնք այսօր արհամարվել և անտեսվել են ամբողջությամբ:

Այսօր Խոր Վիրապ եկեղեցին, որը կոչվում է նաև վանական համալիր, հեռու է Հայ Առաքելական Սուրբ եկեղեցի կոչվելուց: Այն ամբողջությամբ վերածվել է բիզնես կենտրոնի: Եկեղեցու ցանկացած այցելուի համար հենց առաջին հայացքից դա ակնառու է դառնում, սկսած վճարովի ավտոկայանատեղից, եկեղեցու շքամուտք վճարովի մեքենաներ բարձրանալուց վերջացրած ուրիշ բնակավայրերից Հայր Սուրբի թույլտվությամբ առևտրականների տարատեսակ ապրանքների վաճառքից: Եթե այդ ամենը Ձեր կողմից իբրև Հայր Սուրբ հռչակած եկեղեցու սպասավորը կատարում է ի օգուտ եկեղեցու գանձարանի՝ միանշանակ կարդարացվի: Իսկ այդ ամենը, ինչպես նաև Հայր Սուրբ Տարոնի պահվածքն և վերաբերմունքը հիասթափեցնում և վանում են մարդկանց եկեղեցական հավատքից և եկեղեցի հաճախելուց:

Այդ առումով շատ ուշագրավ է Սրբազան Քահանայապետի քարոզներից մեկը, որտեղ անդրադարձ է կատարվել ավետարանական այն դրվագի վրա, երբ Հիսուսը տարածքից դուրս է վռնդում առևտրականներին, որը Սրբազան Քահանայապետը մեկնաբանեց այսպես. երբ մարդիկ տեսնում են, որ քահանան բիզնես է անում կամ ինքն իրեն պահում է քահանային ոչ վայել՝ աշխարհիկ կյանքով, գայթակղվում են ու հիասթափվում եկեղեցուց:

Չբավարարվելով այդ ամենով և ապավինելով Սրբազանի հովանավորչությանը Հայր Սուրբը անցնելով հոգևոր իշխանության սահմանը՝ փորձ է անում մտնել տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ավագանու և ղեկավարի իրավասությունների շրջանակ:Ասածիս վառ ապացույցն այն է, որ դեռևս 2015թ. եկեղեցուն տրամադրված հողամասին հարակից ՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օտարումն Հայր Սուրբ Տարոնի << որոշմամբ>> համարվել է << ապօրինի>>, քանի որ այն չի համաձայնեցվել իր հետ: Ավելին, այդ ամենից զայրացած Հայր Սուրբ Տարոնը և Սրբազանը վանքի խորանից աղոթքն առ Աստված հնչեցնելու փոխարեն փնովում, վատաբանում և նույնիսկ փորձել են վարկաբեկել համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին՝ համայնքի ավագանուն և համայնքի ղեկավարին:

Հարկ ենք համարում նշել նաև , որ համայնքում 2015թ. կատարված հողամասի օտարման հարցը, Հայր Սուրբ Տարոնի և Սրբազանի դրդմամբ, Մայր Աթոռը փորձեց վիճարկել դատական կարգով, ինչը ոչ իրավաչափ լինելու պատճառով դատարանը վարույթ չընդունեց:

Բոլորովին վերջերս համայնքների զարգացման հիմնադրամը նախատեսել է հիմնադրամին նվիրաբերված շուրջ 0,02 հա հողամասում տուրիզմի զարգացման համար կառուցել դիտահարթակ և տեղեկատվական կենտրոն:Սակայն նախագծային աշխատանքներ կատարելու ընթացքում մոտեցել է Հայր Սուրբ Տարոնը և արգելել կատարել չափագրման աշխատանքներ ՝ պատճառաբանելով, որ այն չի համաձայնեցվել իր հետ: Նա նաև փորձել է խոչընդոտել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում աղբամանների տեղադրման աշխատանքներին:
Ելնելով վերոգրյալից և նկատի ունենալով այն հանգամանքը, որ Խոր Վիրապ եկեղեցու <<Հոգևոր սպասավորը>> այլևս չի գիտակցում իր ով լինելը, ուստի համայնքի ավագանին

ՈՒՂԵՐՁՈՎ

դիմում է Ձեզ և խնդրում.

1.Արգելել նրա ներկայությունը Խոր Վիրապ եկեղեցում:

2.Համայնքի ավագանու խնդրանքը չբավարարելու դեպքում.

ա. համայնքի բնակչությունը արգելելու է Հայր Սուրբի մուտքը եկեղեցի, քանի որ Տարոնը և Սուրբ հոգին անհամատեղելի են:

բ. համայնքի ավագանին հանդես կգա եկեղեցուն տրամադրված հողամասի մակերեսի չափը փոփոխելու և այն ՀՀ կառավարության 24.12.2003թ. N1709-Ն որոշման պահանջներին համապատասխանելու առաջարկությամբ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ
2. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**